

ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ԱՆԴՐԵԱՍ ԲՅՈՒՋԱՆԴԱՅՈՒ ՏՈՆԱՑՈՒՅՑԻ ԹԱՐԴՄԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Դ. ԱՐՐԱՆՄԱՆ

«Աղբյուրագիտական վիճելի մի քանի հարցերի մասին» խորագրով մեր հոդվածում, որը լույս է տեսել «Պատմա-բանասիրական հանդեսի» 1976 թ. երկրորդ համարում (էջ 173—181), որպես IV դարի հալ մատենագրության առկայությունը վկայող կարևոր փաստարկ մատնացույց էինք արել տոմարագետ Անդրեաս Բյուզանդացու «Վասն սրբոյ պատեթին յետ և յառաջ խաղալոյ և վասն դրութեան երկերիւրեկին» տոնացույցի հայերեն թարգմանության բնագիրը: Կատարված տոմարագիտական հաշվումներից մենք եզրակացրել ենք, որ այն հայերեն թարգմանված ուետի է լինի հայկական գրերի ստեղծումից առաջ՝ 353—383 թթ.:

Է. Բ. Աղայանն իր «Նախամաշտոցյան հայ գրի ու գրականության, մեսրոպյան այբուբենի և հարակից հարցերի մասին» գրքւյկում, որը լույս է տեսել 1977 թ. Իրևանի պետական համալսարանի հրատարակչությամբ, անդրադառնում է Անդրեաս Բյուզանդացու տոմարական աշխատության թարգմանության ժամանակի հարցին և հանգում է բոլորովին այլ եզրակացության:

Անդրեասի տոմարական տվյալ աշխատությունը երկու հարյուր տարիների համար կազմված տոնացույց է և հայկական տոմարի պատմության համար բացառիկ արժեք ունի: 353 թ. կազմված այդ տոնացույցի հետ են կապված օգոստոսի 11-ով սկսվող հայկական ամանորը և հայկական՝ մեծ կոշվող թվականը: Այդ բնագիրը հայ հին տոմարական գրականության միակ աշխատությունն է, որի մեջ եղած շարժական և անշարժ ամիսների զուգադրությունը հնարավորություն է տալիս թվագրելու այն 383 թ. առաջ ժամանակով, մի բան, որը կարևոր ապացույց է նախամաշտոցյան հայալեզու մատենագրության գոյության վիճելի հարցի լուսաբանության տեսանկյունից:

Չեռնարկելով Անդրեասի տոնացույցի մեջ գործածված շարժական և անշարժ ամիսների զուգորդության հաշվումների քննարկումը, է. Աղայանը, թվում է, թե հիմք պիտի վերցնեն տոնացույցի բնագիրը և նրա հրատարակության առթիվ մեր գրած առաջաբանը: Սակայն նա հիմք է ընդունել «Պատմա-բանասիրական հանդեսի» մեր հոդվածում մեջբերված շորս տողը միայն:

1 է. Աղայանի այս գրքւյկից վերցված մեծերուամենբը տրվելու են աեքսաում՝ «Աղ.» կրճատ ձևով:

Քանի որ է. Աղայանի արած դիտողությունները վերաբերում են հիմնականում մեր վերծանությանը և կատարած տոմարական հաշվումներին, ուստի նպատակահարմար ենք գտնում նախ բերել այդ վերծանությունն ու հաշվումները և ապա անցնել դիտողություններին:

Անդրեաս Բյուզանդացու տոմարական աշխատության թարգմանության ժամանակը որոշելու համար մենք հիմք ենք ընդունել բնագրում հանդիպող հայկական շարժական և եղիպտական ամսաթվերի հետևյալ զուգադրությունը. «Արդ՝ սկիզբն հասարակելոյ տուրնջեան և գիշերոյ ըստ թուոյ եղիպտացւոցն ի Ի և ի Դ ամսոյն լինի, որ անուանեալ կոչի Պեմենովթ, որ զայ կշոի ըստ թուոյն Անտիոքացւոց ի Ի-երրորդ գիւտրոս ամսոյն, այսինքն՝ մեհեկանի» (ԱԲ., 78)²:

Անդրեաս Բյուզանդացու բնագրում զարնանային գիշերահավասարը եղիպտական տոմարով ընդունել ենք պեմենովթ ամսվա 24-ին: Որ զարնանային գիշերահավասարը, իրոք, եղել է պեմենովթի 24-ին, ստուգվում է Անանիա Շիրակացու հետևյալ վկայությամբ. «Հասարակածն եղիպտացոց ի պենիմով ի ԻԴ (24) է հանապազ»³:

Անդրեաս Բյուզանդացու զուգադրության մեջ հայկական մեհեկանը համադրված է նաև անտիոքացոց դյուստրոս ամսվա հետ՝ «... որ զայ կշոի ըստ թուոյն անտիոքացոց ի Ի-երրորդ դիւտրոս ամսոյն, այսինքն՝ մեհեկանի»: Մեզ հայտնի է, որ անտիոքյան տոմարական համակարգը համապատասխանել է ասորականին, իսկ ասորականով զարնանային գիշերահավասարը եղել է, իրոք, մարտի 20-ին. այդ ի նկատի ունենալով, ավելորդ ենք համարել քննության առնել մեհեկանի՝ եղիպտական պեմենովթի հետ եղած զուգադրությունը: Մեր կարծիքը հաստատելու համար անհրաժեշտ ենք համարում Մատենադարանի № 5975 ձեռագրից բերել անտիոքյան և ասորական ամսաթվերի մի զուգադրության մասին հետևյալ հիշատակությունը. «Սոցա (այսինքն ասորական և անտիոքյան տոմարական համակարգերի) զուգադրությունն ընդ հոռոմայեցոցն մի է, զոր ի հոռոմայեցոց պատճէնն շարադրեցաք, դի ի միասին մտանեն և ելանեն ամիսք սոցա ընդ հոռոմայեցոցն»:

Հոռոմեական տոմարով զարնանային գիշերահավասարի ամսաթվի մասին թեև եղել են տարբեր կարծիքներ՝ մարտի 19-ը, 20-ը, 21-ը, բայց մենք ընդունել ենք մարտի 20-ը՝ նկատի ունենալով, որ այն պաշտոնապես ընդունվել է տոմարական մատենագրության մեջ:

Գարնանային գիշերահավասարի՝ մարտի 20-ի հետ զուգադրվող հայկական մեհեկան ամիսը թվական չունի, ուստի մեհեկանի վերջին օրը՝ 30-ը, մենք զուգադրել ենք մարտի 20-ի հետ, գտնելու համար այն թվականը, որի ժամանակ մեհեկանը կարող էր համընկնել մարտի 20-ին: Զուգադրության համար հաշվել ենք հայոց ամիսների օրերը՝ սկսած նավասարդի մեկից, նրանից հանել ենք հոռոմեական ամսօրերը՝ սկսած հունվարի 1-ից և գտնե-

² Անդրեաս Բյուզանդացուց վերցված մեջբերումները տրվելու են տեքստում՝ «ԱԲ.» կրճատումով:

³ Ա. Գ. Արրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Նրևան, 1944, էջ 120:

⁴ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 5975, էջ 34ր:

լով հարական (շարժական և անշարժ ամիսների միջև եղած օրերի թիվը)՝ նրա միջոցով որոշել ենք թվականը: Կատարել ենք հետևյալ գործողությունը. նախասարդից մինչև մեհեկանի 30-ը հաշվել ենք 210 օր, հունվարի 1-ից մինչև մարտի 20-ը՝ 79 օր, 210 օրից հանել ենք 79-ը, ստացել ենք 131, որը և եղել է հարական: Պարզել ենք, որ այդ հարական ունեցող տարեթվերը եղել են 380—383 թթ.: Այդ էլ մեզ հիմք է տվել եզրակացնելու, որ տվյալ բնագիրը կարող էր թարգմանված լինել 383 թ. առաջ: Այն չէր կարող 353 թ. առաջ թարգմանված լինել, որովհետև Անդրեաս Բյուզանդացին այդ թվականին է կազմել իր զատկացանկ-տոնացույցը և 383 թ. էլ ուշ չէր կարող թարգմանված լինել, որովհետև դրանից հետո մարտի 20-ը կհամընկնեիր ոչ թե մեհեկան ամսի հետ, այլ՝ արեգի:

Անդրեաս Բյուզանդացու տոմարական աշխատության մեջ շարժական և անշարժ ամսաթվերի մեր օգտագործած զուգադրությունը, սակայն, միակը չէ: Նույն բնագրում հայոց մեհեկան ամիսը երկու անգամ զուգադրված է հռոմեական մարտ ամսի հետ: Այդ զուգադրությունները ոչ թե վրիպել են մեր ուշադրությունից, ինչպես կարծում է է. Աղայանը, այլ համեմատության մեջ չենք դրել, նկատի ունենալով, որ դա մեր կատարած հաշվումների վրա ոչինչ չի ավելացնում:

Այդ զուգադրություններից մեկը հետևյալն է. «Եւ քանդի սկիզբն ամե-նայն տարւոյն յԹԺ-երրորդն մարտի ամսոյ լինի, այսինքն՝ է մեհեկանի» (ԱԲ., 78): Այստեղ հռոմեական մարտ ամիսն է զուգադրված հայոց մեհեկանի հետ: Հաշվարկը նույնն է. տոնացույցի թարգմանության վերջին սահմանը կստացվի 383 թ.:

Ավելի որոշակի է Անդրեաս Բյուզանդացու բնագրում հանդիպող երրորդ զուգադրությունը, որը գործ է ածված տոմարի վերջում. այնտեղ կատարված է երկու զուգադրություն. մեհեկան ամիսը զուգադրված է մարտի հետ, իսկ արեգը՝ ապրիլի. «Արդ՝ քանզի տուշութիւն եկեղեցւոյ այսպէս ուսուցանէ պահել ամի ամի զարն Բաղարջակերաց, և զի մերթ դեպի շորեքտասաներորդն ի մարտի՝ այսինքն ի մեհեկանի, մերթ յապրիլի, այսինքն՝ յարեգ ամսեան» (ԱԲ. 80): Հայկական և հռոմեական ամսաթվերի զուգադրությունն այստեղ այնքան որոշակի է ներկայացված, որ մեկնաբանման կարիք չունի: Եթե մեր հիմք ընդունած առաջին զուգադրությունը ինչ-որ չափով կարելի էր պատահական համարել, ապա այստեղ արդեն կասկածանքի տեղ չի մնում, քանի որ իրար են զուգադրված մարտ-մեհեկան և ապրիլ-արեգ ամիսները, իսկ երկու դեպքում էլ տոնացույցի թարգմանության տարեթիվը 383-ից չի անցնում: Աղայանը մեր կատարած տոմարական այս հաշվումների մեջ բացարձակ ոչ մի սխալ կամ թերություն չի մատնանշում. նա միայն Անդրեասի աշխատության մեջ գրած առաջաբանում և «Պատմաբանասիրական հանդեսի» հոդվածում նկատել է երեք վրիպակ. ա. հոդվածում գիշերահավասարի փոխարեն գործ է ածված արեաղարծ (որն առաջաբանում ճիշտ ձևով գիշերահավասար էլ գրված է), բ. «Պեմենովթ ի Դ-երրորդը» կտր փակագծում 24-ի փոխարեն տպվել է 25 (առաջաբանում ճիշտ ձևով է, ճիշտ ձևով է հաշված նաև հոդվածում) և գ. «դիւստրոս Ի-երրորդը» կտր փակագծում 20-ի փոխարեն տպագրվել է 25 (հաշվումների մեջ հաշված է ճիշտ ձևով): Բացի այդ, է. Աղայանը կատարել է աղբյուրա-

գիտական մի ուղղում և ցույց տվել, որ դյուստորոս ամիսը եգիպտական ոչ թե շորորոդ ամիսն է, այլ՝ յոթհորոդ: Ինչպես տեսնում հենք, նրա նշած սխալները, աղճատումներն ու թյուրըմբռնումները ընդամենը երեք շնչին վրիպակներ են, որոնցից երկուսի վրիպակ լինելն ընդունել է նաև ինքը, և բնագրային փորրիկ մի ուղղում, որոնք ոչ մի կապ, ոչ մի առնչություն չունեն մեր կատարած տոմարական հաշվումների և նրանցից հանված հղրակացությունների հետ:

Առաջին զուգադրությունից հետո ուշ շրջանի ընդօրինակող գրիչներից մեկը, ինչպես մենք ցույց ենք տվել, Անդրեասի բնագրի մեջ այն տեղում, ուր ասված է, թե եգիպտացոց պեմենովթ և անտիոքացոց դյուստորոս ամիսները համընկնում են հայոց մեհեկանի հետ, իր կողմից ավելացրել է. «Թէև այժմ ի մեր ամս և յաւուրս յարեգ ամիս են»: Այսինքն՝ եթե բնագիրը զրելու կամ թարգմանելու ժամանակ գարնանային գիշերահավասարը տեղի է ունեցել հայոց մեհեկան ամսում, այժմ այն լինում է արեգում: Կասկածից վեր է, որ եթե նախագաղափար բնագրում եգիպտական 24-ը և անտիոքացոց 20-ը զուգադրված չլինեին հայկական մեհեկան ամսի հետ, ապա հիշատակագիրը պատճառ չէր ունենա ավելացնելու, որ իր ապրած ժամանակում մարտ ամիսը, պեմենովթը և դյուստորոսը զուգադրվում են արեգ ամսի հետ: Այդ, անշուշտ, արված պիտի լինի մաշտոցյան գրի ստեղծումից հետո, 552 թ. ուշ, քանի որ Անդրեասի տոնացույցը երկու հարյուր տարիներ ընթացքում միակն է եղել քրիստոնեական ութ ժողովուրդների, այդ թվում և հայերի համար:

Հայտնի է, որ հետագայի գրիչները կամ խմբագրողները, երբեմն ըստ իրենց նախասիրության, ընդմիջարկություններ (ինտերպոլյացիաներ) են մուծել բնագրերը: Անհավանական չէ, որ Անդրեասի բնագրում ևս կարող էին ընդմիջարկություններ կատարվել: Գիտական աղբյուրագիտության խնդիրն է դրանց հարցը պարզելու համար ոչ թե առաջնորդվել նախասիրություններով, այլ կատարել վերլուծական բաղմակողմանի քննություն: Բայց ծանոթանալով, թե մեհեկանի անունը Անդրեասի բնագրից պոկելու համար է. Աղայանը ի՞նչ պատճառաբանություն է առաջ քաշում:

Խոսելով եգիպտական պեմենովթ ամսվա հետ մեհեկան ամսվա առաջին զուգադրության մասին, Աղայանը գրում է. «Եթե Անդրեասը ինքը զուգադրեր նաև հայկականը, ապա, ինչպես ցույց է տալիս Անտիոքյան տոմարի հետ զուգադրելու եղանակը, անպայմանորեն պետք է նշեր նաև մեհեկանի օրը» (Աղ., 133): Կատարելով խնդրի հետ կապ չունեցող մի հաշվառում, նա եզրակացնում է. «Այս բոլորը անվերապահորեն ասացուցում են, որ «այսինքն՝ մեհեկանի»-ն Անդրեասի հավելումը չէ» (Աղ., 134):

Քննության առնելով մեհեկան ամսվա երկրորդ զուգադրությունը մարտ ամսվա հետ, նա կրկին գալիս է այն համոզման, որ «Անդրեասի տեքստում հայոց մեհեկան ամսի անունն էլ չի եղել» (Աղ., 135):

Անդրադառնալով երրորդ զուգադրությանը, ուր խոսվում է բաղարջակերաց տոնի մասին և նշվում, որ լուսնի լրման շորեքտասներորդը մեկ հանդիպում է «ի մարտի, այսինքն մեհեկանի, և մերթ յապրիլի, այսինքն յարեգ ամսեան», է. Աղայանը գտնում է, որ «այստեղ ամբողջ հատվածով Անդրեասին է, բայցի «այսինքն՝ մեհեկանի» և «այսինքն՝ յարեգ ամսեան» բացատրություններից» (Աղ., 143):

Նա իր կարծիքը հիմնավորում է հետևյալ կերպ. «Եթե Անդրեասը ինքը զուգադրեր նաև հայկականը, ապա, ինչպես ցույց է տալիս Անտիոքյան տոմարի հետ զուգադրելու եղանակը, անպայմանորեն պետք է նշեր նաև մեհեկանի օրը: Դա անխուսափելիորեն անհրաժեշտ էր նաև երկու ուրիշ պատճառներով. ըստ եզրպատկանի՝ պեմենովթ ամսի 24-ին է եղել գիշերահավասարը, իսկ ըստ Անտիոքյանի՝ դյուստրոսի 20-ին» (Աղ., 133): Բայց դրա անհրաժեշտությունը երբեք չէր կարող լինել այն պարզ պատճառով, որ եթե հռոմեական, եզրպատկան և անտիոքյան տոմարներով զարնանային գիշերահավասարի օրերը անշարժ էին և որոշակի հայտնի (հռոմեականը անխախտ լինում է մարտի 20-ին, եզրպատկանը՝ պեմենովթ ամսի 24-ին, անտիոքյանը՝ դյուստրոս ամսի 20-ին), ապա հայկականը կոնկրետ ամսաթվով նշվել չէր կարող, որովհետև զարնանային գիշերահավասարը չորս տարին մեկ օրով հետ էր շարժվում: Այսպես, օրինակ, եթե 353 թ., այսինքն Անդրեասի տոմարը կազմած տարին, զարնանային գիշերահավասարը եղի էր մեհեկանի 23-ին, 356-ին՝ կլիներ 24-ին, 360-ին՝ մեհեկանի 25-ին և այսպես շարունակ, ուստի անկարելի էր հայկականում շարժվող զարնանային գիշերահավասարը զուգադրել անշարժ տոմարի հետ:

Է. Աղայանը գտնում է, որ մեհեկան ամսվա անունը Անդրեասի բնագրի մեջ է մտցրել նրա թարգմանիչը. «... ոչ թե զուգադրել է հայկական մեհեկանը պեմենովթ և դյուստրոս ամիսների նշված օրերի հետ, — գրում է նա, — այլ միայն բացատրել, թե դրանք, այդ ամիսները, տարվա ամիսների հաջորդականության մեջ հայկական ո՞ր ամսին են համապատասխանում» (Աղ., 134—135): Եթե այդ կատարած լիներ իրոք ընդմիջարկող մեկը, ապա նա նախ անհարկի չէր նշի, որ մեհեկանը զուգադրվում է պեմենովթի հետ և հետո ավելացնի, որ իր ժամանակում արեգ ամիսն է զուգադրվում: Կարծում ենք, ընդմիջարկողի համար դժվար չէր լինի ուղղակի գրել, որ եթե տոնացույցը գրելիս մեհեկանն է զուգադրված եղել պեմենովթի հետ, մեր ժամանակում արեգն է զուգադրվում:

Անդրեասի բնագրում մեհեկան ամսի հարադատությունն ապացուցող ահառարկելի փաստը այդ տոնացույցի օգտագործումն է Հայաստանում Մաշտոցից առաջ. եթե մենք կարողանայինք ապացուցել, որ այդ տոնացույցը անվիճելի օգտագործվել է սկսած 353 թ., այլևս առարկություններ չէին կարող լինել, որ հայկական տոնացույցի մեջ հայերեն ամսանունները գործածվել են անհրաժեշտորեն: Այս հարցին մենք կանդրադառնանք քիչ հետո:

Այժմ քննության առնենք է. Աղայանի վերծանությունը՝ նախապես ուղղելով նրա տոմարական հաշվումներում տեղ գտած որոշ անճշտություններ:

«...Մեհեկանի 20-ը համընկել է մարտի 20-ին (կամ, որ նույնն է, պեմենովթի 24-ին) 340 թվականին» (Աղ., 134): Մեհեկանի 20-ը հռոմեական մարտ ամսի 20-ին կարող էր համընկնել ոչ թե մեկ, այլ չորս տարիներում՝ 340—343 թթ.:

«...Հայերը նրան դիմեցին, ասենք, 360 թվականին, երբ պեմենովթի 24-ին (=մարտի 20-ին) համապատասխանում է մեհեկանի 26-ը» (Աղ., 134): Այստեղ երկու սխալ է թույլ տրված. նախ՝ մեհեկանը կհամապա-

տասխանի ոչ թե մեկ՝ 360 թ., այլ երեք այլ տարիների, ապա՝ պեմենովթի 24-ը մեհեկանի 26-ի հետ համընկած տարիները կլինեն 364—367 թթ.:

«...Կամ էլ, ենթադրենք, 381-ին, երբ պեմենովթի 24-ին համընկնում էր մեհեկանի 30-ը» (Աղ., 134): Մեհեկանի 30-ը պեմենովթի 24-ի հետ զուգադրվող համապատասխան տարեթվերից սկզբինը կլինի 380 թ., իսկ վերջինը՝ 383 թ.:

«Մենք արդեն ասացինք, որ 384 թվականին հռոմեական մարտի 20-ը համընկել է արեգի 1-ին» (Աղ., 139): Մարտի 20-ը արեգի 1-ի հետ կարող էր համընկնել 384—387 թթ.:

«Իսկ երբ կարող էր արեգի 30-ը համընկնել մարտի 20-ին.— 501—504 թվականներին» (Աղ., 139): Ծիշտ չէ, արեգի 30-ը մարտի 20-ին կարող էր համընկնել 500—503 թթ.:

«... Իսկ 452 թվականին՝ մարտի 3-ին (sic!), այսինքն՝ արեգի վերջին օրն է համընկել ապրիլի 1-ին» (Աղ., 139): Արեգի վերջին օրը համընկել է ոչ թե միայն 452-ի, այլ 452—455 թթ. հետ: Իսկ թե ի՞նչ իմաստով է բերված նախադասության մեջ «մարտի 3-ին» մեզ համար մնաց անհասկանալի: Բոլոր դեպքերում, արեգի վերջին օրը չի կարող միաժամանակ համընկնել ո՛չ մարտի 3-ի և ո՛չ էլ ապրիլի 1-ի հետ:

«... Կարող ենք ասել, որ տարվա սկիզբը (մարտի 19+13 օր) կարող էր արեգին, թեկուզ և նրա վերջին օրվան, համընկնել 353—452 թվականների ընթացքում» (Աղ., 139—140): Է. Աղայանի նկատի ունեցած տարվա սկիզբը արեգի վերջին օրվա հետ համընկել է ոչ թե 352, այլ՝ 553 թ.:

«Արեգի զուգադրյալումը մեզ բերում է մինչև 452 թվականը» (Աղ., 140): Արեգի զուգադրյալությունը մեզ կարող է բերել մինչև 455 թ.:

«Կամ էլ 384—504 թվականները» (Աղ., 140): Ծիշտ կլինի՝ 384—503 թթ.:

«Թարգմանության ժամանակը հնարավոր կլինի համարել 339—452 կամ 384—504 թվականները» (Աղ., 140): Ծիշտ կլինի՝ 366—455, կամ 384—503 թթ.:

«... արեգի վերջին օրը համընկնում էր ապրիլի մեկին: Այս վերջինն արդեն գիտենք՝ 452 թվականն է» (Աղ., 142): Իրականում, արեգի 30-ը ապրիլի 1-ին համընկնող վերջին թվականը կլինի 455-ը:

«...384 թվականին գիշերահավասարը եղել է մարտի 19-ին, իսկ արեգի 1-ը՝ մարտի 20-ին, ապա ավելի ստույգ է 385—387-ը» (Աղ., 142): Ավելի ստույգ են 384—387 թթ., քանի որ զուգադրությունը երբեք 3 տարիներով չի լինում:

«...Մեհեկանի 30-ը=մարտի 14-ին՝ 405—408 թթ.» (Աղ., 144): Մեհեկանի 30-ը մարտի 14-ի հետ զուգադրության տարիները կլինեն 404—407 թթ.:

Քննարկելով Անդրեաս Բյուզանդացու մոտ գարնանային գիշերահավասարի և Քրիստոսի շարժարանքի (որ նույնն է զատկի) օրերի զուգադրությունը, Աղայանը գրում է. «Անդրեասի թարգմանիչը իր հավելումով ցույց է տալիս, որ իր ժամանակ («այժմ») երկուսն էլ՝ թե՛ «Քրիստոսի շարժարանաց օրը» և թե՛ գիշերահավասարը լինում են միևնույն արեգ ամսին, և հենց սու է կարևորը՝ թարգմանության մոտավոր ժամանակը որոշելու համար» (Աղ., 141):

է. Աղայանի խոսքը, ինչպես կարելի է նկատել, արեգ ամսի կոնկրետ ամսաթվի չի վերաբերում, այլ թարգմանչի ժամանակին՝ ընդհանրապես: «Սա նշանակում է, թե գիշերահավասարի և «չարչարանաց» օրերի զուգուղիպության սկիզբը կարող էր լինել այն թվականը, երբ արեգի 1-ր համընկնում էր (ընդգծումները մերն են — Ա. Ա.) հռոմեական անշարժ տոմարի մարտի 20-ին» (Աղ., 142): Մի այլ անգամ, կատարելով որոշ հաշվումներ, եզրակացնում է. «Ուրեմն, «Քրիստոսի շարչարանքի» օրը լինում է զարնանային գիշերահավասարից հետո, ապրիլի 1-ին, կամ էլ՝ գիշերահավասարն է համընկնում արեգին» (Աղ., 141): Բայց հայտնի է, որ գիշերահավասարը զատկի հետ չի կարող զուգադրվել և համընկնել, քանի որ գիշերահավասարն անշարժ լինում է մարտի 20-ին, իսկ զատիկը նրանից հետո շարժվում է մարտի 22-ից ապրիլի 25-ը եղած օրերի միջև: Բերենք մի քանի օրինակ՝ կապված հենց արեգ ամսվա հետ: Եթե 384 թ. գիշերահավասարը եղել է արեգի 1-ին, իսկ զատիկը՝ արեգի 5-ին, ապա 387 թ. գիշերահավասարը եղել է արեգի 1-ին, իսկ զատիկը՝ ահկի 7-ին: Եթե 500 թ. գիշերահավասարը եղել է արեգի 30-ին, իսկ զատիկը՝ ահկի 13-ին, ապա հաջորդ տարին՝ 501 թ., գիշերահավասարը եղել է արեգի 30-ին, իսկ զատիկը՝ մարտի 3-ին:

Անդրեասի տոմարի թարգմանության ժամանակը պարզելու համար է. Աղայանը հիմք է ընդունել բնագրի հետևյալ տեղեկությունը. «... քանզի Քրիստոս Դժ-աներորդ (14-րդ) աուր ամսոյն առաջնոյ շարչարեցաւ, յայտ է յետ հասարակելոյ տուրնջեան և գիշերոյ արեգ ամսեան, և ոչ այս վրիպեալ է ի մէջ, քէն այժմ ի մեր ամս և յաուրս յարեգ ամիս են...» (ԱԲ., 78): Նա այդ թարգմանել է և միաժամանակ բնագրից անկյունավոր փակագծով առանձնացրել այն մասը, ինչ ինքը ընդմիջարկություն է համարում. «... և որովհետև Քրիստոս առաջին ամսվա 14-րդ օրը շարչարվեց, [հայտնի է՝ արեգ ամսվա՝ ցերեկվա և գիշերվա հավասարվելուց հետո և սա չի վրիպել մեղանից, թեև այժմ մեր տարիներով և օրերով արեգ ամսին են լինում]» (Աղ., 137):

Աղայանի կարծիքով Անդրեասի բնագրի այս հատվածում կարևորը «Քրիստոսի շարչարանքի» հիշատակության փաստն է. «Թարգմանիչը, — գրել է նա, — շատ խելացի մարդ է եղել և մեզ համար շատ որոշակի ցուցում է թողել... գրելով, թե «Քրիստոսի շարչարանքի» օրը (մարտի 19+13) արեգ ամսին է լինում կամ, ինչպես մենք գերադասում ենք թարգմանել «արեգ ամսվա գիշերահավասարից հետո է լինում» (Աղ., 140):

Փակագծի մեջ վերցված թվանշաններից մարտի 19-ը է. Աղայանի կարծիքով «Դժ-աներորդն» է, որին գումարելով 13 թիվը, ունենում է ապրիլի 1-ը: Բայց ի՞նչ թիվ է նրան գումարված 13-ը՝ մենք դժվարացանք պարզել: Հագիվ թե նա շփոթած լինի հուլյան և գրիգորյան տոմարների միջև ներկա ժամանակում եղած 13 օրերի տարբերությունը: Սա, ամենայն հավանականությամբ, վրիպակ է «Դժ-աներորդի» (14-ի), ինչպես հաշվել է մի այլ անգամ. «... ըստ Անդրեասի, տարվա առաջին ամսվա մեկը մարտի 19-ն է, ապա 14-րդ օրը կլինի ապրիլի մեկը (Աղ., 139): Բայց 19-ին գումարելով 14, ապրիլի մեկ չես ստանա:

է. Աղայանը վերը բերած բնագրում, սակայն, նկատում է ինչ-որ անոշորշություն. «Խնդիրն այն է, որ այնքան էլ պարզ չէ, — գրում է նա, — թե

«յետ հասարակելոյ տուրնջեան և գիշերոյ արեգ ամսեան» կապակցութեան մեջ «արեգ ամսեան»-ը ինչի՞ն պետք է հատկացնել՝ գիշերահավասարի՞ն, թե «Քրիստոսի շարշարանաց օրվան» (Աղ., 138): Այդ անորոշութիւնը նկատի ունենալով է. Աղայանը տոմարական հաշվումները կատարում է երկու եղանակով. առաջին՝ ո՞ր թվականին գարնանային գիշերահավասարը կարող էր համընկնել արեգ ամսվա հետ և երկրորդ՝ ո՞ր թվականին Քրիստոսի շարշարանքի օրը կարող էր համընկնել արեգ ամսվա հետ:

Գարնանային գիշերահավասարն արեգ ամսվա հետ զուգահերձելու փաստի հիման վրա համապատասխան թվականը գտնելու նպատակով նա կատարում է հետևյալ տոմարական հաշվումը. «Մենք արդէն ասացինք, որ 384 թվականին հոռմեական մարտի 20-ը համընկել է արեգի 1-ին: Իսկ ե՞րբ կարող էր արեգի 30-ը համընկնել մարտի 20-ին — 501—504 թվականներին» (Աղ., 139):

Իսկ ո՞ր թվականներին Քրիստոսի շարշարանքի օրը կարող էր զուգահերձել արեգ ամսի հետ: Այդ հաշվելու համար է. Աղայանը հիմք է վերցնում «տարվա առաջին ամսվա 14-րդ օրը» (Դժ-աներորդը) և նրան գումարում մարտի 19-ը (Թժ-աներորդը) և ստանում ապրիլի 1-ը, կատարում է տոմարական հաշվումները և ստանում 353—452 թթ.:

Ուշագրավ է, թե ինչպես է բացատրում է. Աղայանը բնագրի այն տեղեկութիւնը, որ Քրիստոսը շարշարվել է «... յետ հասարակելոյ տուրնջեան և գիշերոյ արեգ ամսեան... թեև այժմ ի մեր ամս և լուսուրս յարեգ ամիս են»: Նա գտնում է. որ առաջին արեգ ամիսը գործածողը Անդրեասն է, իսկ երկրորդը՝ Անդրեասի բնագրի թարգմանիչը: «Թարգմանիչը, — գրում է նա, — ինչպես ասացինք, շատ խելացի մարդ է եղել: Նա սկզբից ասում է, թե «Քրիստոսի շարշարանաց» օրը, ըստ Անդրեասի, լինում է մեր արեգ ամսին, իսկ հետո ավելացնում, որ դա մեզանից չի վրիպել...»: Այդ հիմքի վրա նա եզրակացնում է. «Անդրեասի թարգմանիչը իր հավելումով ցույց է տալիս, որ իր ժամանակ («այժմ») երկուսն էլ՝ թե՛ «Քրիստոսի շարշարանաց օրը» և թե՛ գարնանային գիշերահավասարը լինում են միևնույն արեգ ամսին...» (Աղ., 141): Պարզաբանման կարգով ասենք, որ Քրիստոսի շարշարանաց օրը կապված է զատկի տոնի հետ և տեղի է ունենում նրանից երկու օր առաջ՝ ավագ ուրբաթ օրը և շարժվում է զատկի հետ միասին: Մենք ընդունում ենք Աղայանի կարծիքը, որ թարգմանիչը, իրոք խելով մարդ է եղել, հետևապես անհավանական ենք համարում, որ նա չգիտենար, որ Քրիստոսի շարշարանաց օրը գարնանային գիշերահավասարի հետ միևնույն արեգ ամսում միշտ չէ որ լինում է: Եթե 414 թ. շարշարանաց օրը եղել է արեգի ուրբին, ապա 417-ին եղել է ահկի ամսի 10-ին:

է. Աղայանի վերծանութեան համար, ինչպես տեսանք, ելակետ են եղել երկու ամսաթիվ՝ «Դժ-աներորդ» և «Թժ-աներորդ» (այս երկու ամսաթվերի վրա են կառուցված նրա վերծանութեան համար հիմք ծառայած բոլոր տոմարական հաշվումները): Ծանոթանանք, թե ի՞նչ թվեր են այս «Դժ-աներորդը» և «Թժ-աներորդը»:

«Դժ-աներորդ» համար է. Աղայանը հիմք է ունեցել Անդրեասի բնագրի հետևյալ տեղեկութիւնը. «Քրիստոս Դժ-աներորդ աւուր ամսոյն առաջնոյ շարշարեցաւ»: Նա ոչ մի բացատրութիւն չի տվել, թե ո՞ր ժողովրդի ամսաթիվ է այդ «Դժ-աներորդը» և ի՞նչ անուն ունի այն: Անանուն այդ ամիսը

Նա գործ է ածել իբրև «տարվա առաջին ամսվա 14-րդ օրը»։ Լևդյանը, ինչպես երևում է, չի կարողացել պարզել տարվա և ամսվա անունը և ամեն տեսակի անախորժությունից ուղտո մնալու համար թողել է նրան անհայտության մեջ։ Նա չի պարզել նաև, թե այդ «ԴԺ-աներորդ» կոչեցյալը լուսնակա՞ն ամսաթիվ է, թե՞ արեգակնային։ Աղայանն անգործ է թողել նաև այն հարցը, թե «աուր առաջնոյ» ասելով ո՞ր թվականի առաջին տարին է նկատի ունեցվել՝ հոռոմեական հունվարը, եգիպտական թոփթր. անտիոքյան դիոսը, հայկական նավասարդը կամ ուրիշ ո՞րը։ Աղայանի ուշադրությունից վրիպել է Անդրևաս Բյուզանդացու մոտ հանդիպող մի կարևոր ցուցում, ըստ որի «ԴԺ-աներորդը» հանդիպում է մեկ մարտ ամսին, մեկ էլ՝ ապրիլին։ «Ձի մերթ դեպի շորեքտասաներորդն ի մարտի, այսինքն մեհեկանի և մերթ յապրիլի, այսինքն արեգ ամսեան» (ԱԲ., 80)։ Այդ ի՞նչ փոփոխվող «շորեքտասաներորդ» է. որ մեկ մարտ ամսին է հանդիպում, մեկ էլ՝ ապրիլին, իսկ է. Աղայանն այն անշարժ է դարձրել՝ կապելով մարտի 14-ի հետ։

Պարզվում է, որ է. Աղայանի կողմից ամսաթիվ ընդունված «ԴԺ-աներորդը» ոչ այլ ինչ է, և թե ոչ Լուսնի 19-ամյա պարբերաշրջանի նախադասական առաջին լրումը, որը եբրայական տոմարով համարվում է նրանց առաջին ամսվա՝ նիսանի 14-ը։ Տեսնենք, թե այդ «ԴԺ-աներորդի» մասին, որ է. Աղայանն ընդունել է իբրև հիմնադադափար, տոմարագիտության մեջ ինչ վկայություններ կան։

«Չորեքտասաներորդը», իբրև նախադասական առաջին լրում, առաջին անգամ օգտագործվել է հրեական տոմարում։ Ըստ ավանդության, Աստված խոսել է Մովսեսի և Ահարոնի հետ և հանձնարարել, որ նրանք նշեն եգիպտական գերությունից իրենց ազատման տոնը տարվա առաջին ամսվա՝ նիսանի 14-րդ օրը. «Եւ խօսեցաւ տէր ընդ Մովսէսի և ընդ Ահարոնի յեֆկիրն Էգիպտացոց, և ասէ. Ամիսս այս (խոսքը նիսանի մասին է— Ա. Ա.) եղիցի ձեզ սկիզբն ամսոց. առաջին եղիցի ձեզ յամիսս տարւոյ... և եղիցի ձեզ պահեալ մինչև ի չորս և ի տասն աուր ամսոյն այսորիկ... և եղիցի ձեզ օրդ այդ ի յիշատակ, և տոնեցէք զզա՝ տօն Տեառն» (Ելք, ԺԲ, 1—3, 6, 14)։ Այդ ավանդության հիման վրա էլ հրեաները սահմանել են իրենց դատիկը։ Ի դեպ, այդ մասին նշված է Անդրևասի բնագրում ևս, սակայն վրիպել է է. Աղայանի ուշադրությունից։ Այնտեղ ասված է, որ Աստված հանձնարարել է Մովսեսին և Ահարոնին, որպեսզի նրանք հայտնեն Եգիպտոսում գերության մեջ գտնվող Իսրայելի ժողովրդին, որ ամեն մի ընտանիք մեկական գառ առնի և զոհ մատուցի «ի տասն և չորքորդ ամսոյն», որովհետև «յայնմ աուր փրկեցան ազգն և ցեղը նորա» (ԱԲ, 76)։

Վաղ շրջանում, երբ քրիստոնյա ժողովուրդները դեռ չունեին իրենց սեփական տոմարը, առաջնորդվում էին հրեական տոմարով։ Սակայն 325 թ. պոմարված Նիկիայի տիեզերական ժողովը որոշում է ընդունում՝ հրաժարվել հրեական տոմարից և Քրիստոսի հարության օրը, իբրև զատկական տոն, նշել զարնանային գիշերահավասարից հետո լիալուսնին հաջորդող կիրակի օրը, ի տարբերություն հրեաների, որոնք զատիկը նշում են զարնանային լիալուսնից հետո հանդիպակաց շաբաթվա բոլոր օրերին։

Իսկ ինչ են ասում հայ տոմարագիտ-մատենագիրները այս «ԴԺ-աներորդի» մասին։ Շիրակացին իր «Ձատկի Տեառն» աշխատության մեջ նշում է, որ զատիկը պետք է տոնել «յամսեանն առաջնում»՝ նկատի ունենալով

հրեական նիսան ամիսը, և բացատրում, թե ինչու. «Քանզի յամսեանն առաջնում չարչարեցաւ Քրիստոս զկնի հասարակելոյ տուրնջեան եւ զիշերոյ, որպէս եւ ի սկզբանցն ստեղծաւ մարդն առաջին զկնի հասարակելոյ տուրնջեան եւ զիշերոյ, յամսեանն առաջնում եւ յեգիպտոսէ, փրկեցաւ ի փարաւոնէ, աղատեցաւ ի կաւոյն գործոյ, ի նմին աւուր եւ մեր փրկեցաք յաներևոյթ բռնաւորէն եւ ի դառն գործաւորաց նորին դաւրաց, եւ աղատեցաք ի կաւոյն մեղաց չարչարանաւ Փրկչին»⁵։ Ապա Շիրակացին քննադատում է տեմարագիտութեան մեջ կիրառվող սխալ հաշվումները և գտնում, որ զատիկը պետք է տոնել «զհրամանեալն ի Տեառնէ զչորեքտասան նիսան եւ զայլոց ազգաց, որ նմայն հանդիպի»։ Այսինքն, զատիկը պետք է տոնել հրեական նիսան ամսի 14-ին և մյուս ժողովուրդների համապատասխան ամսաթվերին։

Հովհաննէս Իմաստասերը իր «Յաղագս ըստ Հոռոմոց ամսոց, եւ Դժերորդ լուսնոյ զատկաց...» աշխատութեան մեջ հանդամանորեն բացատրել է, թե ինչպէս է, որ քրիստոնյաները Քրիստոսի Հարութեան տոնը նշելու համար հիմք են վերցրել հրեական նիսան ամսի 14-ը. «Եւ ամենայն կարգք բարեպաշտութեան՝ նախ ի մեծէն և յաստուածայնոյն Մովսիսէ օրէնսդրէ տանն Իսրայելի հրամանաւ Աստուծոյ. զի զտաւն պասեփն արասցեն յամսեանն առաջնում ի չորեքտասաներորդում աւուր ամսոյն, յետ հասարակելոյ տուրնջեան եւ զիշերոյ»⁶։

Նույն մատենագիրն իր մի այլ աշխատութեան մեջ, որն ունի «Պատմութիւն սրբոյ զատկին» վերնագիրը, բացատրել է, թե ինչու է նիսան ամիսը լուսնական համարվում. «... Լուսնական համարի աւուրս զառաջին սկիզբն լրման լուսնի,— գրել է նա,— վասն զի յառաջ քան զՄովսէս ոչ ամիսք կային երրայեցուց... յայտ է, թե զաւրս լուսնին ասէ ամիս, քանզի լուսնական ամիսք էին»⁷։

Որ նախադատկական լուսնի ավագ լրումն ընդունված է նիսան ամսի 14-ը, դժվար չէ ստուգել լուսնի ծննդան և լրման ցանկի միջոցով, որը հրատարակված է «Таблицы лунного круга Анания Ширакаци» աշխատութեան մեջ։ Այդ ցանկում լուսնի ավագ լրումը հրեական տոմարով, ինչպէս կարելի է նկատել, ցույց է տրված նիսանի 14-ին։

Լուսնի 19-ամյա պարբերաշրջանի մեջ լրումները լինում են հետևյալ ամսաթվերում⁸։ Նրանցից առաջինը՝ երրայականը, նիսանի 14-ին է, իսկ հոռոմեականով՝ ապրիլի 4-ին (տե՛ս բերվող ամսաթվերը)։

Այսպիսով, է. Աղայանի կողմից ամսաթիվ ընդունված Դժ-աներորդը լուսնի ավագ լրումն է, հետևաբար սրա հիման վրա նրա կատարած տոմարական բոլոր հաշվումները ճիշտ չեն։

Այժմ քննենք է. Աղայանի տոմարական հաշվումների մյուս հիմնադրույթը՝ «Թժ-աներորդ»-ը։ Է. Աղայանը այդ որոշակի համարել է մարտի 19-ը՝ հիմք ընդունելով Անդրեասի բնագրի հետևյալ տեղեկությունը. «... սկիզբն ամենայն տարւոյն թժ-երորդի մարտի ամսոյ լինի»։ Իր տոմ-

⁵ «Անանիա Շիրակացու մատենագրութիւնը», էջ 298.

⁶ «Հովհաննէս Իմաստասերի մատենագրութիւնը», Երևան, 1956, էջ 248—249.

⁷ Նույն տեղում, էջ 270—271.

⁸ «Таблицы лунного круга Анания Ширакаци», изд. А. Г. Абрамяна, Ереван, 1962, էջ 86.

մարական հաշվումների մեջ է. Աղայանը սա ընդունել է իբրև մարտ ամսի 19-ը. «... քանի որ, ըստ Անդրեասի, տարվա առաջին ամսվա 1-ը մարտի 19-ն է,— գրել է նա,— ապա՝ 14-րդ օրը կլինի ապրիլի 1-ը» (sic!): Եվ այսպես, ԹԺ-աներորդը ընդունելով մարտի 19, է. Աղայանը գումարում է նրան ԴԺ-աներորդ (14)՝ ստանում է ապրիլի մեկ: Սակայն «ԹԺ-աներորդը»

Նիսան 14	Ապրիլի 4	Նիսան 24	Ապրիլի 14
„ 3	Մարտ 24	„ 12	Ապրիլ 2
„ 22	Ապրիլ 12	„ 1	Ապրիլ 22
„ 11	Ապրիլ 1	„ 20	Ապրիլ 10
„ 5	Մարտ 21	„ 9	Մարտ 30
„ 19	Ապրիլ 9	„ 28	Ապրիլ 18
„ 8	Մարտ 29	„ 17	Ապրիլ 7
„ 27	Ապրիլ 17	„ 6	Մարտ 27
„ 16	Ապրիլ 6	„ 25	Ապրիլ 15
„ 4	Մարտ 23		

ոչ թե թիվ է՝ կապված մարտի 19-ի հետ, այլ լուսնի 19-ամյա պարբերաշրջանն է, որը տոմարական մատենագրության մեջ հայտնի է «ԹԺ-երեակ» կամ «Իննևտասներեակ» անուններով:

Իննևտասներյակի մասին հանգամանորեն խոսել է Հովհաննես Իմաստասերն իր «Յաղագս իննևտասներեկ ամացն» խորագրով աշխատության մեջ. կան մարդիկ, դրում է նա, որ սինհարկի «...տարակուսն յաղագս շորեքտասներորդաց սրբոյ զատկին, որ իննևտասան ամալք յառաջ և վերջ խաղայ զատկին: Արդ՝ թէպէտ և գիտնոյն յայտնի է ստուգապէս, բայց... սուղ ինչ բանիւ նշանակեսցուք»: Եվ բացատրում է, որ արեգակնային տարին ունի $365\frac{1}{4}$ օր, իսկ լուսնական տարին՝ $354\frac{1}{2}$ օր: Որպեսզի կարելի լինի արեգակնային և լուսնական ամիսները իրար համադրել՝ զատկի տոնը սահմանելու համար, անհրաժեշտ է շտապարժել լուսնի 19-ամյա պարբերաշրջանը, քանի որ լուսինը 19 տարին մեկ բոլորում է նույն ամսաթվի, շաբաթվա և ուրիշ օրը, իսկ դա հնարավորություն է տալիս պարզել, թե տվյալ տարում լուսնի լրումը զարնանային զիշերահավասարից հետո ամսի քանիսին է հանդիպում և շաբաթվա որ օրը:

Է. Աղայանի տոմարական հաշվումների երկրորդ հիմնադրույթը ևս, ինչպես տեսնում ենք, հիշտ չէ: Լուսնի 19-ամյա պարբերաշրջանը շփոթված է ամսաթվի հետ, հետևապես այս հիմքի վրա կատարած նրա բոլոր հաշվումները կորցնում են իրենց արժեքը:

Վերջացնենք: Աղայանի մատնացույց սրած փաստարկները համոզեցուցիչ չեն և հիմք չեն տալիս վերանայելու մեր նախկին կարծիքը՝ Անդրեասի տոնացույցը նախամաշտոցյան ժամանակում թարգմանված լինելու հավանականության մասին:

9 «Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը», էջ 269: